

# ՆՈՒԻՐԵԱԼ ՏԻՊԱՐՆԵՐ

*Posted on April 24, 2022 by Keghart*



Category: [Opinions](#)



**Սիլվա Իսկիկեան Մահրեճեան, Լոս Անճելըս, 24 Ապրիլ 2022****(1976-ի Քարանթինան, Պէյրուք)**

Արեան հոտը, իր բոլոր երանգներով, եռացող ապակեայ սրսկիչներուն գոլորշին, վիրահատական գործիքներուն անբաւարարութիւնը, մանրեասպան դեղերուն տհաճ հոտը... Այս բոլորին կը միանար խուռներամ վիրաւորներուն վայնասունը, սարսափին պատճառած *ատրենալիսին* գարշահոտը եւ տեղատարափ հրթիռներուն ոռնոցը: Սա **Հաճընի** դարմանատան պատկերն էր, երբ Քարանթինայի հրթիռակոծումէն ու հրդեհներէն մազապուրծ «փրկուած» բնակիչները ապաստան կը գտնէին հայկական թաղին դարմանատան մէջ:

- Ա՛յս մէկը հիւանդանոց. ա՛յս մէկը ներս, ա՛յս մէկը գերեզմանոց...:

-Նե՛րս, գերեզմանո՛ց, հիւանդանո՛ց...:

Տօքթ. Պօղոս Քարաւերտեան դարմանատան դրան առջեւ կանգնած, այս երեք կրկնուող բառերով Քարանթինայի բնակչութեան ճակատագիրը «կը ճշդեր»: Ողորմելիները տեղահանուած, արիւնլուայ, այրած ու վիրաւոր վիճակով, իրենցմէ շատերուն ողջ մնալուն զարմանքը կ'ապրէին ու Աստուած մեծ է (الله أكبر) կը գոռային...:

Տօքթ. Կարօ Մահսերեճեան դարմանատան մէջ ամենէն նախնական պայմաններով մեծ «հրաշքներ» պէտք է գործեր...: Ելեկտրականութեան չգոյութիւնը ստիպած էր զինք իր



ինքնաշարժին մարտկոցին (battery) թելեր եւ լամպեր միացնելով լուսաւորել վիրահատութեան սեղանը: Քանի մը տնական մկրատներով, ունելիներով եւ սակաւաթիւ բժշկական թելերով մեծ ու խորունկ շերտերով վերքեր կը կարէր: Վերքեր մշակելն ու դարմանելը յարաբերաբար «դիւրին էին», բայց ի՞նչ կրնար ընել, երբ վիրաւորը իր ակնագունդը ափին մէջ բռնած կ'աղաչէր. «Հաճիս, հաքի՛մ, աչքս տեղը դիր...»:

Հոգեբայր բժիշկներ՝ Կարօ և Պօղոս

«Սեւ մարդուն» ցաւերը ինչպէ՞ս մեղմացներ, ցաւազրկող (morphine) սրսկելէն բացի, երբ ամբողջ մարմինով այրած անդէմ ու անանուն դարձած էր: Ամօթխած հարսին արիւնահոսող վերքը ինչպէ՞ս կարէր, երբ ամջկոտ մանկամարդուհին կը պնդէր ըսելով. «Հաճիս, հաքի՛մ, փէշս վեր չեմ առներ, վերքս հագուստիս վրայէն կարէ...»: Օրուան

քանչորս ժամերը բաւարար չէին Տօթ. Կարոյին համար, երբ ամբողջ Քարանթինան իր վերքերով, փամփուշտներով եւ հոգիին ցաւերով այդ դարմանատունէն կ'անցներ...:

15 Սեպտեմբեր 1975 ին, երբ հայկական թաղերը եւ շրջանները թիրախ դարձած էին հրթիռներու, դիպուկահարներու եւ գանազան տեսակի զինեալ յարձակումներու, Տօթ. Կարօն Հաճընի Տատրեան մանկապարտեզին սրահին մէջ հիմնեց թաղին դարմանատունը: Կամաւոր խմբակ մըն էինք՝ 6 օրիորդներէ եւ 4 երիտասարդներէ բաղկացած: Տօթ. Կարոյին խիստ եւ բժախնդիր ցուցմունքներով քանի մը շաբթուան ընթացքին արդէն պատրաստ էինք առաջին օգնութեան ծառայութիւն տալու վիրաւորներուն: Մեր տան սաւանները տաք արդուկին տակ դարձան վիրակապ: Անկողինի ծածկոցները՝ զոյգ փայտերու կցելով՝ պատգարակ: Շատ մը բարեսիրական միութիւններ եւ անհատներ գնահատելով դարմանատան տարած աշխատանքը, փութացին օգնութեան՝ մատակարարելով դեղորայք, բժշկական գործիքներ եւ գանազան պիտոյքներ:

Վարդագոյն երագներով դպրոցականներ էինք Յունուար 1976-ին՝ Քարանթինային անկումով սթափեցանք, վայրագութեան «չափը» տեսանք, հասունցանք...: Յանկարծ վարպետ վերք մշակողներ եղանք եւ վիրահատութիւններու օգնական դարձանք: Մահը իբրեւ սովորական երեւոյթ տեսանք...:

Սա հինգ տարեկան, հրեշտակի աչքերով աղջկան, ի՞նչ ընել, ո՞ր տանիլ: Փամփուշտը ծակած էր ճակատը եւ տեղաւորուած գանկին մէջ: Փրկարարը մեր խումբին «անուշիկ Գօգօն» էր: Արտաքինին չսագող, բայց ներքինին յարմարող անունով, իր կեանքը վտանգելով, դիպուկահարները անտեսելով, բազմաթիւ վիրաւորներ [Պարպիքի հիւանդանոցը](#) հասցուց:



**Հ.Կ.Բ.Մ.-ի, Ս. Գեորգ**

**Եկեղեցւոյ թաղականութեան եւ Հաճնոյ Հայրենակցական Միութեան Կողմէ Պատուոյ յուշատախտակ՝ «Առ ի երախտագիտութիւն 50 տարիներու բժշկական եւ ընկերային ծառայութիւններուն համար». Տօքթ. Կարօ Մահսերեճեան շրջապատուած Պէյրութահայ բժիշկներով**

Բազմաթիւ դէպքեր կրնամ պատմել Քարանթինայի վերապրողներուն շնորհակալ վերաբերմունքը արտայայտող: Յաճախ, երբ Պէյրութի արեւմտեան կողմ կ'անցնէիք ես ու Տօքթ. Կարօն (արդէն նշանուած), անպայման մեր դիմաց կը յայտնուէր հիւրասէր կամ երախտապարտ Քարանթինայի վերապրող մը...:

Կ'ուզեմ յիշել, որ գանկէն վնասուած այդ սիրունիկ հնգամեայ հրեշտակը յաջող վիրահատութեամբ մը վերապրեցաւ եւ բժշկուհիի մը մէկ հատիկ որդեգիրը դարձաւ:

Սահմանափակ հնարաւորութիւններով՝ Հաճընի դարմանատունը Տօքթ. Կարօ Մահսերեճեանին շնորհիւ մինչեւ Սեպտեմբեր 1978 օգտակար դարձաւ շրջանին բնակիչներուն, առանց խտրականութիւն դնելու հայուն կամ օտարին միջեւ:

1978-էն մինչեւ օրս, Հաճընի դարմանատունը կը գործէ՝ իր բարի ու նուիրեալ տիպարներով:

Այս դժուարին օրերուն, գոյատեւման կամք եւ յարատեւ վերելք կը մաղթեմ Հայկական Կրթական Բարեսիրական Միութեան (Հ.Կ.Բ.Մ.) դարմանատան:

\*\*\*\*\*

*Հաճընը, աւելի ճիշդ՝ Նոր Հաճընը Պէյրութի հայկական թաղերէն մէկն է՝ հիմնուած 1930-*

**ԱԿԱՆ ԲՈՒՍԿԱՆՆԵՐՈՒՆ:**

*Դարմանատունեն հինգ քլմ. հեռու գտնուող յայտնի հիւանդանոց մը, ուր հասնելու համար շտապ օգնութեան բուժսպասարկողները մահը իրենց աչքին առջեւ պետք է առած ըլլային:*

## Comments



**Silva Iskikian Mahrejjan** – 2022-04-24 11:19:11

Շնորհակալութիւն Գեղարդին, որ այսօր՝ Ապրիլ 24-ին, յատուկ ուշադրութեան յանձնեց այս յօդուածս, որուն մէջ ականատեսի աչքերով նկարագրած եմ մարդկութեան հանդէպ գործադրուող անարդարութիւնը եւ անոր դիմաց ցուցաբերուած՝ հակակշռող բարութիւնն ու նուիրումը: